կի) զօռով էր գործում»... Բայց որպէս եւ լինէր, տէրտէրն ու երէցկինը շատ սիրով էին երեւում միմեանց հետ:

Հացի ժամանակ Ասլանը հարցրուց, թէ ի՞նչ նոր լուրեր կան Վանից:

— Ազգային գործերը վատ չեն, — պատասխանեց տէր հայրը ծանր կերպով: — Պ... — ը ողջ եւ առողջ է, գիշերները բոշաների լակոտներ պար ածելով է անցկացնում... իր ձեռները. նրանց շլինքեն է փաթաթում...: Քրդերին սովորեցնում է այս եւ այն վանքի հունձքի դէզերը կրակում են, որ գիշերները լոյս լինի...: Տօնախմբութեանց ժամանակ ինքն էլ ետ չէ մնում հասարակաց ուրախութիւնից, եւ իր ժողովուրդը բարոյապէս մխիթարում է. կոյս աղջիկներ եւ ջահել հարսներ է փախցնել տալիս, որ հայոց զաւակներն աճեն, ազգը բազմանայ...: Եթէ մի անպատոած աղջկայ հայր գալիս է նոյն անպատողի մօտ բողոքելու (ուրիշ որտե՞ղ կարող է գնալ խեղճը), նրան մի փոքր խրատում է, փայտի տակ է գցում, ոսկորները լաւ ջարդում է, որ փափկանան...: Յետոյ սրան ասում է — «Գնա՛յ, եղբայր, այս աշխարհը քո տեղը չէ, դու մեծի պատիւը չես հասկանում»: Նա ականջ է դնում նրա խրատին եւ գնում է միւս աշխարհը...: Մի ուրիշ սովորութիւն էլ ունի նա, որից երեւում է, որ նա շատ բարեսիրտ է: Երբ քրդի աւազակները հայոց գիւղորայքը թալանում են, եւ դժբախտաբար բռնւում են, նա քրիստոնէական մարդասիրութեամբ գնում է փաշայի մօտ եւ աւազակներին ազատում է, դրա համար քրդերը նրան «հայր» են կոչում...: Մի ուրիշ լաւ կանոն էլ ունի նա, երբ մէկին կամենում է խրատել, նրանից փող է առնում. «Ոչինչ պատիժ, ասում է նա, այնպէս չի ցաւեցնի ադամորդուն, որպէս փողը, որովհետեւ շատ է սիրում»:

— Բայց ինչպէ՞ս մինչեւ այսօր նոյն խրատներից զուրկ մնացիք դուք, — հարցրուց Ասլանը վրդովոած ձայնով:

— «Գիժը գժին երբ որ կը տեսնի, իր մահակը կթաքցնի», — ասաց նա թուրքի առածով: — Թէեւ նա աւազակ է, բայց ես էլ շատ բարի պտուղ չեմ...

— Լաւ, դու այն ասա՛, ի՞նչ աչքով են նայում քաղաքի իշխաններն այդ աւազակի այս տեսակ առաքինութիւնների վրայ, — հարցրուց Ասլանը:

— Նրանք անշնորհակալ մարդիկ չեն, ընդհակառակն, շատ երախտագէտ են, — պատասխանեց տէրտէրը առաջոայ ծանր կերպով: — Նրանք իրանց պարտքը լաւ ճանաչում են, եւ ամէն ամիս ժողովրդի կողմից շնորհակալութեան վկայականներ են ուղարկում Պոլիս եւ նրան մեծ մարդկերանց հետ են համեմատում: Բայց պէտք է ճշմարիտն ասած, նա էլ չէ մոռանում իր պարատ որսերից երբեմն նրանց բերանը փոքրիկ պատառներ գցել...:

— Փաշայի հետ ինչպէ՞ս է նա: